

սպասէր մեզ, դռնէն կ'ընդունի եւ անցողաբար ցոյց կու տայ իր ախոռներն, ուր կը խալտան դեռ նոր բռնուած վայրի այծերը:

Գրեթէ քառասնամեայ անձ մ'է մեր ասպընթականն. ռուս սպայից համազգեստը կը կրէ, ու Բէքժան-խանին նման մեծ հարստութեան տէր, շարժալի գրիզից եւ կարուածոց տէրն ըլլալով: Կը հասկընայ ու կը խօսի գաղղիարէն լեզուն. ինչպէս ընդհանրապէս Ռուսաց ամեն սպայակոյտը: Զօրավարի աստիճան ունէր հայրը եւ մարման ազնուականութեան պետ: Այլեւայլ սենեակներէ անցընելով, կ'առաջնորդէ սպայկիներով յարկածածոյկ մեծ սրահ մը. քիչ ետքը՝ երբ հասանք յիշեալն, Սարդարաց պալատին մէջ տեսայ այն նախագաղափարը՝ զոր իրեն օրինակ առած էր Ռահիմ—խան տանը շինութեան: Ասիական այս հոյակապ սրահը՝ մէկ կողմէն պարտիզին վերայ տեղ ունէր, իսկ ի միւսմէն՝ գունաւոր

սպայկիներով զոցուած, որ կը հանեն ի փայտեայ պատշգամբ, ճիշդ ի հանդիպող Արարած լերին: Հրաշագեղ օթոցք, պարսկական ամենարուեստ կապերաք եւ գորգք կը համաձայնին գեղեցիկ սպայկիներով եւ նկարու ի գեղազարդել թէ՛ բարձրութեամբն եւ թէ ընդարձակութեամբ նշանաւոր այս սրահը, ուր եւրոպական ճարտարութիւնք փոքու իւրիչ չեն մնասեր հոն ամեն մանրամասնութեամբն իշխող արեւելեան ախորժակին ներդաշնակութեան:

Խանը, ճանչցող ու սիրով ցոյց կու տայ մեզ տանը մէջ գտնուած արուեստական ճոխութիւնները. եւ մասնաւոր կերպով՝ ճենա, կան ընտիր յախճապակիներն որ խաներու հին պալատին վրայ նոր շէնքին հիմունքը փոխելու ժամանակ գտնուած են. եւ քանի մը նմոյշ՝ յիշատակի համար կը նուիրէ ինձ....

(Շարայարեղի).

ԱՐՈՒՍԱՅԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



(Տես յէջ 130)

Ա. Յառաջարանի մէջ յիշուեցաւ այս պատմութեան ձեռագրին սկզբան պակասութիւնը. հիմնական եղածին առաջին երեան այլ քիչ մի մաշած եւ դժուար կարդալի է. ասկէց թուի սխալ թուական կամ քանի մի բառ պակաս, որով չիփթի ըսածն. որ է այսպէս:

« Սկսիմք օգնութեամբ եւ առաջնորդել »
 « Թեամբ Աստուծոյ, Մեր ժամանակաւ, այս »
 « ինքն ի սկզբն 564 տարւոյ (հիճր. որ է »
 « հոկտ. 1168—1169 սեպտ. թուին Քրիստոսի, եղաւ վերաշինութիւն (Հայոց) Ս. »
 « Յակոբ կոչուած եկեղեցւոյն, որ Եգիպտոսի Սպարստան կոչուած վիճակին մէջն է, »
 « բլրոց մօտ »:

Բնագիրն Ալ-Պասադին الجاساڤا յոգնակի գրէ՝ ուրիշ տեղ Ալ-Պուստան ըսածը, որ է այգի, պարտէզ, պահէզ, ե Քահիբէ մայրաքաղաքէն քանի մի մղոն միայն հեռու է յարեւելեան հարաւային կողմն: Տեղն ստոյգ, ըսած թուականն կամ վերաշինութիւնն սխալ. վասն զի ի յիշեալ թուականին՝ վանքն ոչ թէ շինուեցաւ՝ այլ աւրուեցաւ կամ աւմայացաւ, ինչպէս քիչ մի վերջը պիտի ըսէ

ինքն պատմիչն. ապա թուի թէ այս տեղ աւրուելը յիշելով մէկ բառիւ՝ առաջին շինութիւնն այլ ուզեք էր յիշել, ե երկու դիւպուածն յիրար խառնուեր է:

« Այս եղաւ.... Էմիրին ատեն, որ կա »
 « ճալարէր զԵգիպտոս, շնորհիւ Սուլտանին. »
 « ե բարեկամ էր ամէն քրիստոնէից, թէ »
 « մեծամեծաց թէ՛ ռամկաց: »

Անուն Էմիրին պակսի ի ձեռագրին, բայց յետոյ յիշածն Խաչանաւի, որ Մուսղանգիր խալիֆէի հաղադրի վերաբերելն էր, Պատր ալ՝ ճալարի կոչուած, ե շատ անգամ Էմիր ալ՝ Շիւյիշ, յայսինքն՝ جاشوش Զաւ զօրապետ. յիշուի նա եւ ուրիշ պատմուոյ անուամբք այլ, իբր գար մի յառաջ քան զվերոյիշեալ թուականն, այսինքն ԺԱ. դարու վերջին քառորդին, Հայոց նոր գաղթական բերելով բազմացող յէգիպտոս. համազգիան իբրեւ 30, 000 տուն. գոնէ 10, 000, ինչպէս գրէ Ն. Ենոր. հալւոյ հմուտ կենսագիրն. ասոնց յատուկ եւ պիսկոպոս այլ ձեռնադրեց մեծ կաթողիկոսն Գրիգոր Վկայասեր, անձամբ գալով յԵգիպտոս, ինչպէս պիտի վկայէ ե մեր պատմիչն:

Պատրի ինչ ցեղէ ըլլալն յայտնի չէ, միայն կ'ըսուի թէ, Ասորոց երկրէն եկած էր կամ բերուած իբր գերի:

« Ինքն (Էմիրն) ամսական տասն գնեալ » (սակի գահեկան) կ'առնուր վարձերկրի (վա-
» նացն Հայոց), որ իր կալուածն էր: Չնոց
» դարեալ և յառաջ տարաւ զվերաշինութիւն
» Ս. Յակովբայ սրբաբանին (արար. Լէճճա)
» ասքինա, ի յոյն ՁՃՄՄԻՐ քառէ). բարձր դրմ
» քեթով՝ որ շատ հեռուէն կ'երեւէր, կամա-
» բոց և կամարակապօք, և աւարտեց բոլորը,
» նորէն հաստատելով մեծամեծ դռները. ա-
» սոնք ատեն մի վերելուցան, բայց ինքն նո-
» րէն նորոգեց. դարձեալ վերուցին այդ դռ-
» ները, ինքն այլ դարձեալ հաստատեց »:

Հաւանութիւն քրիստոնէից՝ և մանաւանդ
Հայոց այն ատենի և տեղւոյ յառաջագիմու-
թեան նախանձուք և հակադակողք կ'ընէին
զայս: Այս դիպուածոց մանրամասնութիւնն
աւելի՛ փափագելի էր մեզ գիտնալ, թէ երբ ա-
ռալին անգամ շինուեր կամ հիմնուեր էր՝ այդ
Երուսաղէմի Հայոց դուռըդ եգիպտական
Ս. Յակովբն, որովհետեւ պատմին վերաշի-
նութիւն կամ նորոգութիւն կ'ուէր Էմիրին ը-
րածը. որոյ գործակից եղած է և Գրիգոր
մեծ Վկայաւէրն. ինչպէս վրայէ և պատմին
Վարդան, թէ երբ եկաւ ի Մար, և մեծա-
» բեցաւ յոյժ ի Սուլտանէն, և շինեաց
» վանո Հայոց, և ձեռնադրեաց զեղորորդի
» իւր Գրիգորէս՝ եպիսկոպոս »: որ ըստ այ-
լոց և ստուգիւ՝ զեռորդի իւր էր Վկայասիրի
առաջին անգամ յեգիպտոս գալուն թուա-
կանն հասարակօրէն համարուի 1076. թէ և
ըստ Վարգանայ Թերեոս աւելի կանոնի. զի
նազիր տարի մի նստած յաթօռն (1065-6)
« գնաց, կ'ըսէ, ի Կ. Պոլիս, ի Թարգմանու-
» թիւն, և առեալ զգրեանն՝ կամեցաւ գնալ
» յԵրուսաղէմ. և նաւին առեալ գնաւ (վա-
» բելով Հոգմոյն) տանի ի Մար »: Վանաց
շինութեանն անտարակոյս ձեռնառու եղած է
Պատր, որոյ արդէն յամի 1074 զգրուկ ըլ-
լալն յիշուի: Սա բաց այդ մեծ Ս. Յակովբ
եկեղիցիէն,

« Աւարտեց զնորոգութիւն (ուրիշ մօտիկ)
» եկեղեցւոյ մի, բայց օծել չտուաւ, և ոչ պաշ-
» տօն կատարել հօն: Երբ վախճանեցաւ ինքն՝
» Թաղուեցաւ այս եկեղեցւոյ մէջ: Հիմայ այս
» վանացս չորս կողմն են պարեզք, բանջա-
» րանոց և արտորապէս ցորենոյ. զբօսանքի
» տեղեաց ամենէն նշանաւորնիւրն մէկն
» է: — Երբոր Ղուզք (ցեղակից Թուրքաց)
» և Քուրդք տիրեցին Եգիպտոսի երկրին
» հիւր. 564 (1168-9 Փրկիչն), ամենուն ծա-
» յօթ ամառնապէ եկան այն ատեն յեգիպ-
» տոս բնակող Հայոց վրայ. իրենց պատ-

» րիարքն և կրօնաւորք՝ մեր յիշեալ վանքէն
» վաւերտուեցան, դռներն պատեցան զոցուե-
» ցան, և ոչ որ համարձակէր մօտենալու ա-
» մայացեալ եկեղեցիներուն »:

Եգիպտոսի տիրողն էր հռչակաւոր Սալահ-
էտտինն՝ Հալպայ և Դամասկոսի Կուրէտ-
տին սուլտանին հրամանաւ, և զի ազգաւ
Քուրդ էր նա, Արտանէշ անոր զօրքերն այլ
Քուրդ կուէ, որոց զինակից էին և Ղուզք
կամ Ղօզք: Իսկ Թուականն՝ որ ստորգ է և
նոյն իր պատմութեան սկզբան յիշածն,
յայտնէ մեր վերը ըսած շփոթութիւնը՝ և
եկեղեցւոյ շինութեանն և ամպուլթեանն:

Այս ատենի Հայոց եպիսկոպոսին՝ զոր նա
պատրիարք կ'ուէ, յայտնի չէ անունն. անկէ
առաջ մեզ ծանօթ եպիսկոպոսն է Անանիա,
30 տարի մ'առաջ վախճանած:

« Ազգեստանն ի կալուած տրուեցաւ Ծաքի
» ալ-Պահա Ալի անուն Դամասկացւոյ (գիտ-
» նական անձ մի), ոս Հայոց համար շնորհեց
» Յովհ. Մկրտիչ եկեղեցին, որ շինուած էր
» ամբիճ Տէրամօր եկեղեցւոյն վրայ, ի Հա-
» րա-գաւիւր (Թաղի). հօն բնակեցաւ պատ-
» րիարքն՝ նոյն տարին (1168-9) »:

Յիշեալ Թաղն՝ որ հիմայ Զուվայիւր կ'ը-
սուի, կոչուած է յանուն Բարբարոս (Պէր-
պէր) ցեղի կամ զնդի, որ շիներ էր զայն, Գա-
հրէ մայրաքաղաքի շինութեան ատեն, իբր
յամբ 969. Ինչուան հիմայկայ այն տեղ յայտնի
հնութեան նշաններով եկեղեցի մի յանուն Ս.
Կուսին (Ալ-Աւհրա), և հաւանութիւն նոյն
պատմին յիշածն է: Իսկ վրայէ վրայ շինուած
եկեղեցիք շատ յիշուին և կան յեգիպտոս:

Որչափ այլ Հայք Եգիպտոսի տէրութեան
փոփոխութիւնն ատեն վնասուեցան և քուռե-
ցան, բոլորովին այլ անգործ և ապշած չի
կեցան. Ֆուստատայ (Հին Փահիրէի) մէջ Տէ-
րամօր նուիրեալ եկեղեցի մի կար, շատ յա-
ճախեալ ի բարեպաշտից. այդ քաղաքական
չիփոխից ատեն՝ եգիպտական զօրայ մէկ բա-
ժինն՝ Ճիւլիլիէ կոչուած՝ որ Խափշիկ էր ազ-
գաւ և հակառակ միւս (Ռայանիէ) բաժնին,
կողոպտեց այս եկեղեցին, և ինչուան ճամ-
բաներու վրայ այլ առաջակութիւն և մար-
դասպանութիւն կ'ընէր, ինչպէս պատմէ Ա-
բուսալի, և աւելցնէ.

« Երբ Ղուզք և Քուրդք տիրեցին Եգիպ-
» տոսի (1169ին), զունդ մի քրիստոնեայ
» Հայոց՝ վրայ հասան այս Սեւերուն, և շա-
» րաբեր սպաննելով՝ մնացեալները վաւերե-
» ցին. և անոնց բնակած Թաղն որ մօտ էր
» Ալ-Համրայ (Թաղի) անքնակ մնալով՝ Հա-
» տալպա Ղուզի մակառուսեալ Փահիրէի
» վրայն գնեց, և մշակութեան երկիր դար-
» ձուց տեղը », և այլն:

Յատուկ Հայոց դորագունդ մ'ըլլալն ի բա-
նակի խալիֆայտին Եգիպտոսի, յիշեն ուրիշ
պատմիչք այլ, նա և իրենց բնակութեան
Թաղը, Հիւսէյնիէ կոչուած:

« Հայոց Պատրիարքն. — Այս պատ-
» րիաբն նախ եպիսկոպոս էր Իթֆիհի. (որ
» հիմայ Աթֆիհ,  կոչուի, և փոքր քաղաք

» մէ՛ է հարաւակողմն Գահիրէի, իբր 2800
» բնակչք)։ յետոյ Ա—Հաֆիզի խալիֆայտու-
» Թեան ատեն (1130—49) մտածեց պատ-
» րիարք ըլլալ, կաշառք տալով: Գաշինք դը-
» բու ամիրայետին հետ, անոր պատմական
» գիտութիւններ հազարդելու. և ու՛ հաճե-
» լով թոյլ տալու անոր որ շարաքն երկու
» անգամ երկուշարթի և հինգարթի, զայ ի
» պալատ, էմիրներու և պաշտօնէից հետ,
» նա և տօնական օրեր, զինքը բարեւելու,
» և նոր գտած տեղեկութիւնները տալու:
» Այս կերպով երբ պատրիարքն այցելութեան
» գար Զմրիստայ պալատն, կու հազարդէր
» ինչ որ գտեր էր ի կենսագրութիւն, ի պատ-
» մութիւնս պատերազմաց, ի ժամանակա-
» գրութիւնս և տարեգիրս առաջին տիրա-
» պետաց. և այսպիսի գրուցակից կ'ըլլար
» Ա—Հաֆիզի հետ, ինչպան ասոր մահը, որ
» հանդիպեցաւ երկրորդ ճումանայ ամսոյն 544
» տարւոյ » (հիւր. որ է Փրկչին 1149):

Յիշեալ Զմրիստայ պալատն (Փասր ալ-
գիմրիստ  քաթիմեան խալի-
ֆայից արքունական մեծ ապարանից մասն
էր, յարեւելեան կողմ Գահիրէի, քաղքին
Զմրուխտ կոչուած զըբան անուամբ: Յիշելի
է այս տեղ որ նոյն տարիները (1135—7) խա-
լիֆային վարուկն էր Պահլաւունին վահրամ,
յետոյ յիշուելի:

« Վերոյիշեալ վանքէն գուրս բայց ոչ հեռի,
» բրտակներն (հողէ ամաններու գործարան)
» զատ փոքր եկեղեցի մի կար, Ա—ամիր պի-
» ահամիլլահ խալիֆային ատեն շինուած
» (որ է նախորդ Հաֆիզի), ի պէտս Մելքի,
» դաց, փոխանակ Հարա Զաւիլայի մէջ ե-
» դած եկեղեցւոյն, որ և արուած էր անոր
» ատեն, և Հաֆիզի ատեն ի մզկիթ փո-
» խուցեալ... Կամարներու վրայ շինուած էր
» եկեղեցին. ներքեւն այլ մեռելոց համար
» գերեզմանատուն մի կար: Երբ Ղօզք և
» Քուրդք Հայոց վրայ հարուած բերին, պատ-
» րիարքնին թողուց զԵգիպտոս և ելաւ զնաց
» յերուսաղէմ. հետը տանելով 75 Մուրբ
» Գիրք, որոց մէջ կար և օրինակ մի չորից
» Աւետարանաց պէպէս գոյներով և ոսկւով
» պայծառազարդ պատկերօք հրաշագործու-
» Թեանց Քրիստոսի, որ փառաւորեալ ըլլայ »:

Բանասիրաց ցանկալի և անակնկալ մար-
մալ մ'է այս ձեռագրաց յիշատակն, ոչ այն-
քան թուղն՝ որքան անոնց ընտիր և պատուա-
կան ըլլալովն, մանաւանդ այն ընտրիւազոյն
Աւետարանն, որ թուի թէ և հնագոյն էր:
Այսպէս կարծելով և Թարգմանիչ գրոցս՝ հա-
մարի թէ յոյն կամ ասորի ճարտարաց գործ
ըլլան զարգեցն. վասն զի, կ'ըսէ, ԺԳ դարէն
առաջ Հայոց մէջ այսպիսի մտերանկար չկար:
Սակայն ԺԲ դարու վերջերն այլ ի Հայոց
ոսկեզարդ և գունագոյն նկարեալ Աւետա-
րանք գտուին հիմայ. (օրինակ մի ըլլայ Սի-
տանի երես 84 պատկերն, Ս. Դերսիսի Լամ-
բրոնեցւոյ Աւետարանին): Թարգմանիչն յիշէ
Էլմիստնի 989 թուին (Քրիստոսի) գրուածը,
որոյ պատմաբան յիշաւի հնագոյն ասորի նկար
են. յիշէ նա և մեր Ս. Ղազարու վանքից
աւետարան մի՝ բիւզանդական մանրանկարօք՝
ի վերջ Ժ դարու. ստուգիւ չունիմք մենք
այդպիսի մի որոյ թուականաւ, բայց հաս
մի՝ ոչ շատ մանր և ոչ այլ խօսոր արուեստով
բայց նշանաւոր պատկերօք և քիչ ոսկւով, որ
ըստ ոմանց ԺԱ դարու գործ է, և ըստ այ-
լոց՝ հնագոյն: Մնայ մեր Երուսաղէմի հռչա-
կաւոր Ս. Բակոբայ միաբանից՝ քննել թէ
հաւանօրէն ղեւ գտուի իրենց գրատան կամ
գանձատան մէջ Արաւսակի յիշած Աւետա-
րանն, որոյ ինքն ականատես եղած և հաւ-
նած գուշակուի. և մեզ հաւանական թուի
թէ Գր. Վկայասէր բերած էր զայն. վասն
զի յիշուած է ի պատմաց մերոց հետը ձե-
ռագիրներ բերելն և թողուլն Եգիպտոս:

« Պատրիարքն ճամբորդութիւնն սկսալ
» շաբաթ օր Հատուր ամսոյ 15ին (նոյեմբ.)
» Մարտիրոսաց 888 թուին (1172 Քրիստոսի),
» որ համեմատի հիւր. 568 տարւոյ Ռապի
» է՝ Կլէլի ամսոյ 23ին Կ'ըսուի, թէ Երուսա-
» ղեմէն գուրս վանք մի շինեց, եկեղեցի մ'այլ
» յանուն Ս. Սարգսի,  որ է նոյն Ա-
» պու Սիրոս  կոչուածն. և այս ե-

» կեղեցւոյս փոխադրեց բոլոր սեղանոյ սպաս-
» քըն և ոսկի դահեկանքն. կ'ըսուի այլ թէ
» 20 միանձունք կային այս վանաց մէջ »:

Կարծեմ այս Ս. Սարգսի եկեղեցի հիմայ
անյայտ, և յիշուած չէ մեր Երուսաղէմի Ս.
տեղեաց ստորագրողներն:

« Պատրիարքն իրեն փոխանորդ քահանայ
» մի թողուց ի Գահիրէ, անոր որդւոյն հետ,
» որ ժամատարութիւն և պատարագ կատա-
» րեն ըստ պատուած ժամանակի, Յովհ. Մկր-
» տիչի եկեղեցւոյն մէջ, որ ի Հարա Զաւիլա՝
» անարատ Տիրամօր մատրան (եկեղեցւոյ)
» վրայ շինուած է, ինչպէս առաջ ըսինք.
» այս եկեղեցւոյ մէջ ժողովէին ընկերութիւն

» մի Հայոց արանց և կանանց, իսկ ասոնց
» ունեցած վանքն եկեղեցիներով մէկտեղ՝ ա-
» մայի թողուեցան, և դռներն այլ փակուե-
» ցան: — Երբ լուր եղաւ որ պատրիարքն
» եկաւ հասաւ յԵրուսաղէմ՝ անվտանգ, բու-
» լոր քրիստոնեայք ընդ առաջ գնացին իրեն
» ուրախութեամբ և խնդութեամբ, հանդերձ
» սաղմոսներգութեամբ և առկենտէն խանդով
» վառած ջահեր տանելով և բուրվանքներով
» խնկելով: — Ասկէ վերջը պատրիարքն
» հանգիստ ապրեցաւ քիչ մ'առնել, և ապա
» հանգեաւ ի շնորհա Աստուծոյ, որ գովակայ
» ըլլայ, Տուրի ամսոյ հինգին (որ համեմատի
» Դեկտ. 27-Յանու. 25), ի նոյն վերոյիշեալ
» տարի, և թաղուեցաւ ի վանի Ս. Յակով-
» բայ Զերեղեան յԵրուսաղէմ: — Սա ազ-
» նուաբարոյ անձ մի էր, գեղեցիկ տեսքով,
» վայելուչ հասակաւ. երեւն մօրուօք և մը-
» ռուղօք պատած, որ ալեւորած էին, և տա-
» րօքն այլ իբրեւ ութնանամեայ էր »:

Այս նկարագիրն անտարակոյս յայտնէ որ
Արուսալէ անձամբ տեսեր է անչոյք եւ իր
պատրիարք կոչածը. ավստս, որ անունը չէ
գրած, կամ թէ կամաւ լուծած է, ինչպէս և
անոր ժամանակակից և ցեղակից Երուսա-
ղէմի եպիսկոպոսին անունը, որոց վրայ ը-
սուած պօգայի զրպարտութիւններ յիշէ, վը-
կայելով այլ որ նախանշուող չարախօսու-
թիւն ըլլան և անտարգի:

« Ե՛րբուն, թէ յԵրուսաղէմ նստող Հայ ե-
» պիսկոպոսն՝ տեսնելով որ ամենքն կ'երթան
» տեսնուելու այս սուրբ պատրիարքին հետ,
» իր ազնուական բարուց համար, նախանշ-
» ձելով վրան՝ Թոյն խնցուց, և մահը պատ-
» ճառեց: Բայց Աստուած յաղորութիւն չուաւ
» այդ եպիսկոպոսին՝ պատրիարքին մեռնելէն
» վերջը, և ոչ երջանիկ կեանք. վասն զի
» քսան օրէն ետեւ ինքն այլ մեռաւ: Ա-
» տուած իր ծածուկ իմաստութեամբ գիտէ
» թէ որչափ ստոյգ էր այդ եպիսկոպոսին
» համար ըսուածն: Իսկ պատրիարքն՝ որոյ
» համար էր խօսքերնիս, զիտուն քահանայ՝
» մ'էր, լաւ տեղեակ Ս. Գրոց և գանձը
» յայդ բացատրող, Բայց կային նախանշուող
» իր բարի համբաւոյն տարածման համար,
» և կ'ըսէին թէ յանցաւոր եղած էր ոչ բա-
» րոյապա՛կ վարքով: Այս զրոյցս հանցիկ ի-
» րեն անմեղութեան ամենէն աւելի նախա-
» ձուքն: Գրոցս հեղինակն (ինքն Արուսալէ)
» վկայէ, թէ հանդիպեցաւ Ասպլունացի Ա-
» պուլի Գասիմ խալիլ փիլիսոփայ բժշկի, որ
» կ'ըսէր, թէ տեսեր էր պատրիարքը՝ Ազ-
» Զուհրի վանքում եղած ատեն, իր խղճիկ
» մէջ (և անարատ գտեր է): Այս զրոյցս իր
» յԱտրիս (Եջիպտոսէ յԵրուսաղէմ) երթա-
» լէն և իր մահուանէն վերջը տարածուե-

» ցաւ: Մտայ զատիներուն գլխաւորին (որ
» էր Ա-Ազգ Հասան իպն Սալամա՝ Պախե-
» լանի մահաւանդանելոյ) տանը մէջ եւ այս
» գրոց խեղճ հեղինակս՝ հանդիպեցայ (վե-
» րոյիշեալ) Ապուլի Գասիմի, Շավվալ ամսոյ
» 27ին, յամին 568 » . (Հիւր. իսկ Քրիստոսի
1173):

Այնքան այլանդակ են զրոյցքն, որ և ոչ
թարգմանել արժան համարուած են. և գրեթէ
նախանձու կիրքն ինք զինքը յայտնէ՝ փոխա-
նակ ուրիշներու ըրածին: Հրէշ պիտի ըլլար
եպիսկոպոսն՝ որ 80ամեայ ծեր պատրիարքի
մի թոյն տայ, որոյ համբաւն, զիտութիւն,
կրօնասիրութիւնն՝ իրեն իսկական լատագով
են: Բայց Աստուծոյ գիտութեան թողլով
Արուսալէի հետ՝ եթէ զատելու բարոյական
բան մ'այլ կար, պատմականը կրնանք խն-
դրել, այլ զուցէ և չգտնել. այսինքն, այդ
եպիսկոպոսին մի ըլլալը և անունը: Բառաջ
քան Երուսաղէմի պատրիարքներն այսինքն
ժյ՝ զարէն յառաջ եղած եպիսկոպոսաց
կարգն և անունքն՝ շատ ստոյգ չեն, թէ և
մօտ ասեմներս՝ Ս. Յակովբայ հռչակաւոր
աթողոյն յաղորդներուն վրայ գրողք չարա-
կարգ մի հրատարակած են. ըստ որոց՝ վե-
րոյիշեալ զիպաց տարին, 1172-3, Սահակ
էր եպիսկոպոսն, այն որ Հռոմկայի ազգային
եկեղեցական մեծ ժողովոյն մէջ կու ոտորա-
գրէ, « Սահակ արքեպիսկոպոս աստուածա-
» կոխ քաղաքին Երուսաղէմի » . և կ'ըսեն,
թէ սա աթոռակալեր է 1152 թուականէն
մինչեւ ի 1180: Բայց ժողովոց պատմութիւնն
և ժամանակակից Արուսալէի պատմածն՝ ան-
տարակոյս կ'ընէ, որ այս Սահակ չէր այն
տարուան (1173) եղած և մեռած եպիսկո-
պոսն. անկէց առաջ՝ նոր զաւապանագիրք կու
գնեն Եսայի եպիսկոպոս, յամի 1152, եղբայր
իր նախորդ Ներսիսի, որ աթոռակալած ըլլայ
յամի 1109. Ուրեմն երկու եղբայր միանգա-
մայն 45 տարի, որ շատ հաւանական չերեմար,
ինչպէս այլ ըլլայ այս, հարկ է որ Եսայիայ
և Սահակայ միկէս, 1152-1171, ուրիշ ե-
պիսկոպոս այլ եղած ըլլայ, և ինքն կամ ի-
րեն անձանօթ յաղորդ մի ըլլայ նախանձա-
բեկ մեռնողն ի 1171. Տեղական խնդրին,
այսինքն խալիլ Գասիմ բժշկին եկած և
պատրիարքին բնական Ազ-Զուհրի վանքն՝
զոր անմիջապէս այս գիտուածէն վերջը յառ-
կապէս պիտի ստորագրէ Արուսալէ, ծանօթ
և անուանի էր. ըստ Թարգմանչացն՝ ընդ
մէջ Գահրիէի և Ֆուտտալի, ուր նախայի-
շեալ այդեստանն կամ ընդարձակ պատմութե-
աներ կային, իրենց առիթ ստացողին անուամբ
կոչուած, որ էր Արդ աւ-Վահայ իպն Մուսա
Ազ-Զուհրի:

(Շարայարեղի).